ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

5 ՄԱՐՏԻ 2021 թ.
№ 3 (1067)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 55-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

Հայաստանյան գարունը հրաշալի է: Գարունն արթնացնում է, վերածնունդ, նորի սկիզբ:

Հետպատերազմյան և Կովիդ-ժահրի պայմաններում մեր կյանքի բոլոր ոլորտների աշխատանքներն ընթացան սահմանափակումներով: Կրթության և գիտության ոլորտը ևս հայտնվեց որոշակի կաղապարների մեջ, թեև ելքը գտնվեց՝ հեռավար ուսուցման տարբեր ձևաչափերում:

Մանկավարժական համալսարանում այժմ դասերն ընթանում են և առկա, և հեռավար ձևով՝ ելնելով ուսանողներին և դասախոսներին չվտանգելու հանգամանքից: Ամեն ինչ քիչ-քիչ վերադառնում է իր հունին:

Համալսարանն այս օրերին դեպի կյանք է ճանապարհում հեռակա ուսուցման համակարգի մագիստրատուրայի շրջանավարտներին: Այսպես՝ յուրաքանչյուր սերնդի հետ համալսարանը նորանում է, շարունակում ուսուցանել հաջորդ սերնդին: Կրթության շարունակականության ապահովման մեջ է համալսարանի հիմնական դերն ու առաքելությունը, մասնագիտական բարձր գիտելիքներով օժտված սերունդների հարափոփոխ երթին ուղեկցելը:

Բարի՜ երթ, սիրելի շրջանավարտներ: Ուր էլ լինեք՝ պահպանեք ձեր մարդկային ու մասնագիտական որակները, մեր հայրենիքն այսօր ավելի քան երբեք, դրա կարիքն ունի:



Սիրելի կանայք և աղջիկներ, թող գարնանային զարթոնքը երջանկություն և խաղաղություն պարգևի ձեր ընտանիքներին, բազմապատկի ձեր աշխատանքային եռանդը՝ հանուն Հայաստանի վաղվա օրվա:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Հանեմ գանձերը հայոց լեռների,
Շաղ տամ բոլորը մորս ոտքի տակ՝
Ախ, էլի քիչ է, ախ, քիչ է էլի,
Շաղ տամ մարգարիտն՝ համայն ծովերի,
Ծաղիկների հետ, մորս ոտքի տակ՝
Ախ, էլի քիչ է, ախ, քիչ է էլի։
Ցած բերեմ բոլոր բույլերն աստղերի,
Զույգ աչքերիս հետ ձգեմ ոտքի տակ՝
Մորս ոտքի տակ՝ ախ, քիչ է էլի։
ԵՎ թեկուզ հանեմ իմ սիրտը բարի՝
Գառի պես զոհեմ մորս ոտքի տակ՝
Ախ, էլի քիչ է, ախ, քիչ է էլի։
Լոկ մայրն է այժմ խիղճն հայրենիքիս՝
Դարերի կյանքն էլ թե տաս մայրիկիս,
Աստված իմ, քիչ է, ախ, քիչ է էլի։

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ԳԱՆՁ է

Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը:

Հովհաննես Թումանյան

Մայրենի լեզուն մի գանձ է, որին չի կարող փոխարինել աշխարհի ոչ մի հարստություն: Իր մայրենի լեզուն վատ իմացողը կես մարդ է, չիմացողը՝ թշվառ, ծառից ընկած մի տերև, որ տարվում է ամեն մի պատահական քամուց:

Ստեփան Զորյան

ՈԼՈՐՏԻ ՃԱՆԱՉՎԱԾ ԳԻՏՆԱԿԱՆԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

Մարտի 4-ին իր 80-ամյա հոբելյանը նշեց մանկավարժական գիտությունների դոկտոր, ՀՊՄՀ հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, տեղեկատվական միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտի վաստակավոր աշխատակից, սպորտային մանրամարզության ԽՍՀՄ սպորտի վարպետ Ռոբերտ Նիկոլայի Ազարյանը:

1964 թվականին գերազանցությամբ ավարտելով Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը՝ Ռոբերտ Ազարյանն արդեն 1970 թվականից իր մասնագիտական գործունեությունը կապում է ԽՍՀՄ դեֆեկտոլոգիայի ԳՀԻ հետ (ներկայում՝ ՌԿԱ շտկողական մանկավարժության ինստիտուտ):

1994 թվականին ավարտելով ասպիրանտուրան՝ նա փայլուն պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ տիֆլոմանկավարժություն մասնագիտությամբ, իսկ 1990-ին՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Շարունակելով իր ուսուցիչների՝ Մ. Ի. Ձեմզովայի, Լ. Ի. Սոլնցևայի գիտական ավանդույթները՝ Ռ. Ազարյանը ստեղծագործական նոր մոտեցումներով իրականացնում է իր գիտական մտահղացումները, աշխատություններում՝ ուշադրությունը սևեռում հատուկ մանկավարժության քիչ ուսումնասիրված վիճելի գիտական ասպեկտներին, այդ թվում նաև ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի հեռանկարներին, բացահայտում է նոր տիֆլոմանկավարժական գիտական ուղիներ տեսողական խանգարում ունեցող երեխաների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ:

Այդ ոլորտի գիտական մշակումները հայտնի են ոչ միայն Հայաստանում և Ռուսաստանում, այլև արտասահմանում:

Նրա 250-ից ավելի գիտական աշխատություններում մեծ տեղ են զբաղեցնում գրքերը, մենագրությունները, դասագրքերը, ուսումնական ձեռնարկները, հատուկ մանկավարժական բառարանները: 1987 թվականին լույս տեսած նրա «Կույրերի և թույլ տեսնողների ֆիզիկական դաստիրակությունը օրվա ռեժիմում» գիրքը թարգմանվել է անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և իսպաներեն լեզուներով:

Պրոֆեսորը մեծ դեր է հատկացնում հատուկ մանկավարժության ոլորտում գիտնականների երիտասարդ սերնդի պատրաստմանը: Հատուկ մանկավարժության և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ոլորտում նրա գիտական ղեկավարմամբ պաշտպանվել է ավելի քան 40 թեկնածուական ատենախոսություն: Նրա գիտական ղեկավարմամբ և խմբագրմամբ Հայաստանում և Ռուսաստանում կազմվել են տարաբնույթ ծրագրեր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության և զարգացման ուղղությամբ:

Մեծ է պրոֆեսորի ներդրումը Հայաստանում որպես չտեսնողների սպորտային սեկցիաների և խմբակների հիմնադիր, նրա անմիջական ղեկավարմամբ կազմակերպվել է չտեսնողների մասնակցությունը թեթև ատլետիկայի, մարմնամարզության, ռուլիգբոլի տարածքային, համամիութենական և միջազգային միջոցառումներին: Ռոբերտ Ազարյանը պատրաստել է տեսողության խանգարում ունեցող ԽՍՀՄ 12 չեմպիոն և մրցանակակիր, իսկ նրա սան Անժելա Սահակյանը նիզակի նետում մարզաձևում դարձել է Եվրոպայի բազմակի չեմպիոն:

Ռոբերտ Ազարյանն աշխատասեր և նպատակասլաց գիտնական է, հանգիստ և հավասարակշռված անձնավորություն, ունի բարեհամբույր վերաբերմունք մարդկանց նկատմամբ: Վայելում է մեծ հարգանք իր սաների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների շրջանում:

Ընկերները, սաները, գործընկերները ի սրտե շնորհավորում են Ռոբերտ Նիկոլայի Ազարյանի ծննդյան տարեդարձը, մաղթելով երկար տարիների առողջ, երջանիկ կյանք և խաղաղ երկինք:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ
Հատուկ մակավարժության և հոգեբանության ամբիոն

Իմ իմացած լեզուների մեջ հայերենը բացառիկ է, նախ՝ որպես զարմանալի տրամաբանական լեզու, ապա նաև՝ իր ճկունությամբ, նոր բառերի կազմելու դյուրություններով:

Ֆրեդերիկ Ֆեյդի

Մեր լեզուն բարձր լեռներից և խորունկ ձորերից ծնած լեզու է, բարձունքների և խորությունների լեզու:

Ավետիք Իսահակյան

Հայոց լեզվի մեջ մարմնացած է հայ ժողովրդի հոգին: Ամեն մի բառը նրա հոգու մի կտորն է: Այդ բառերի մեջ են նյութացած, առարկայացած մեր վիշտը, զրկանքները, դառն ու զվարճալի ապրումները, մեր երազները, հույսերը, իղձերը, սերը՝ մեր ողջ ժողովուրդը:

Ավետիք Իսահակյան

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ ԴՈՒՔ ՄԵԾ ՀԵՏԱԳԻԾ ԵՔ ԹՈՂԵԼ

Մանկավարժական համալսարանում մեծարման հանդիսություն էր կազմակերպվել՝ նվիրված հատուկ կրթության ոլորտի երախտավոր Ռոբերտ Նիկոլայի Ազարյանի 80-ամյակի առթիվ:

Բացման խոսքով հանդես եկավ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտեի դեկան Սիրանուշ Կարապետյանը, ապա բոլոր ելույթ ունեցողները խոսեցին հոբելյարի գիտական ու մասնագիտական գործունեության և հատուկ կրթության ոլորտում նրա մեծ ավանդի մասին:

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն ասաց. «Հատուկ կրթությունը ոլորտի ամենակարևոր ճյուղերից մեկն է, և մեր համալսարանն իր ներկայությամբ պատվում է այդ ոլորտի ճանաչված գիտնական Ռոբերտ Ազարյանը»:

Նա ընդգծեց, որ հոբելյարը մեծ ավանդ ունի համալսարանում Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի կայացման և զարգացման գործում: Ուսանողները սիրում են նրան, շարունակում նրանից ստացած գիտելիքներով նպաստել ոլորտի զարգացմանը:

Ռեկտորը հատուկ կրթության ասպարեզում և Մանկավարժական համալսարանում ունեցած մեծ ավանդի համար և 80-ամյակի առթիվ Ռոբերտ Ազարյանին պարգևատրեց Մանկավարժական համալսարանի մեդալով:

Հոբելյարի աշխատանքային գործունեությունը ներկայացրեց հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Թերեզա Ազատյանը:

Համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ Աիդա Թոփուզյանն էլ ընդգծեց Ռ. Ազարյանի՝ հատուկ կրթության և մասնավորապես տիֆլոմանկավարժության ոլորտի զարգացման ուղղությամբ կատարած աշխատանքը:

«Առողջ եղեք և վարակեք մեզ ձեր եռանդով ու կամքի ուժով»՝ ամփոփեց պրոֆեսոր Ա. Թոփուզյանը:

Հայաստանի կույրերի միավորման և Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտի ներկայացուցիչներն անդրադարձան ֆիզկուլտուրայի ասպարեզում Ռոբերտ Ազարյանի՝ չտեսնողների համար տարբեր մրցաշարերի կազմակերպման ու ներդրման աշխատանքներին:

Հոբելյարին երախտիքի խոսքեր հղեց Երևանի տեսողության խանգարումներ ունեցող N 114 դպրոցի փոխտնօրեն, Ռ. Ազարյանի նախկին ուսանող Անդրանիկ Գրիգորյանը:

Շնորհավորական խոսք ասացին նաև լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ստեփան Գրիգորյանը և գործընկեր Սպարտակ Փալիկյանը՝ ընդգծելով Ռոբերտ Ազարյանի աշխատանքային բարձր արդյունավետությունը ֆակուլտետի կայացման և զարգացման գործում, նրա մեծ նվիրումը իր մասնագիտությանն ու կոչմանը:

Բարեմաղթանքի խոսքեր ասացին նաև ուսանողները:

Հանդիսավոր հանդիպումն ամփոփեց ֆակուլտետի դեկան Սիրանուշ Կարապետյանը՝ ևս մեկ անգամ շնորհավորելով բազմավաստակ դասախոսին ու գիտնականին, ով իր մասնագիտական ասպարեզում թողել է մեծ հետագիծ:

Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանը նախաձեռնել է առցանց դասախոսությունների շարք: «Ոսկե դասախոսությունների» նախագծին միացել են ԱՊՀ երկրների մանկավարժական առաջատար բուհերը: Վեբինարի կազմակերպիչները դասախոսություններին մասնակցելու են հրավիրում դասավանդողներին, ասպիրանտներին, մագիստրոսներին, ուսանողներին, խնդրով շահագրգիռ բոլոր ցանկացողներին:

ՎԵԲԻՆԱՐ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Առաջին դասախոսությանը, որը տեղի ունեցավ փետրվարի 25-ին, Մանկավարժական համալսարանի ինֆորմատիկայի լսարանում, միացել էին ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի դասախոսները՝ համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանի գլխավորությամբ:

Բանախոսը Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, կենսաբանական գիտությունների դոկտոր Ի. Ա. Ժիգուրևն էր: Ներկայացվող թեման խիստ արդիական էր՝ «Ճգնաժամի անատոմիան. արդյո՞ք կան մարդկության կայուն զարգացման հնարավորություններ»: Դոկտոր Ի. Ա. Ժիգուրևը խոսեց ներկա ժամանակաշրջանում մարդկությանը սպառնացող մարտահրավերների և հնարավոր լուծումների շուրջ, միաժամանակ մտահոգիչ հարցադրումներ արեց:

Դասախոսության ընթացքում դոկտոր Ի. Ա. Ժիգուրևը հանգամանորեն խոսեց մարդկությանը սպառնացող էկոլոգիական աղետի, վերացող ռեսուրսների, շրջակա միջավայրի աղտոտվածության, էկոլոգիական խնդիրների և որպես կարևոր աղբյուր՝ արևային էներգիայի օգտագործման, նաև հողմաղացների կիրառման անհրաժեշտության մասին, որոնք որևէ կերպ չեն խախտում երկրագնդի տաքացման հավասարակշռությունը:

Ներկաները լսեցին վերոհիշյալ և այլ հետաքրքիր խնդիրների, միաժամանակ առաջարկվող լուծումների մասին, իրազեկվեցին մարդկությանն ու երկրագնդին օրեցօր սպառնացող վտանգավոր մարտահրավերների մասին:

Առաջիկա ամիսներին դասախոսություններով հանդես կգան Մոսկվայի, Տոմսկի, Տաջիկստանի, Ռուսաստանի Ա. Ի. Գերցենի, Կրասնոյարսկի Վ. Պ. Աստաֆևի, Մոլդովայի սլավոնական, Կիրգիզիայի Ի. Արաբաևի, Յարոսլավի Կ. Դ. Ուշինսկու և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանների դասախոսները:

Դասախոսությունները շարունակական են և կտևեն մինչև ընթացիկ տարվա սեպտեմբեր ամիսը:

Բանասիրական ֆակուլտետի շրջանավարտները ստացան մագիստրոսական դիպլոմները

Բանասիրական ֆակուլտետի հեռակա մագիստրատուրայի 2020-2021 ուսումնական տարվա 21 շրջանավարտներ ստացան դիպլոմներ: Ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը, փոխդեկաններ Նաիրա Խաչատրյանը և Կարեն Խանյանը, ամբիոնների հարգարժան պրոֆեսորները շնորհավորեցին ուսանողներին՝ մաղթելով նորանոր հաջողություններ հետագա կյանքում: Դեկանը հորդորեց՝ ինչ ոլորտում էլ շարունակեն իրենց գործունեությունը, ուսանողները պետք է բարձր պահեն Մանկավարժական համալսարանի, մասնավորապես՝ բանասիրական ֆակուլտետի պատիվը:

Շնորհավորում ենք մեր շրջանավարտներին և մաղթում ամենայն բարիք:

ՆՐԱՆՔ ՄԵՐ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ

ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի ուսանողներ Հովհաննես Սարգսյանի և Գոռ Գալստյանի հաջողությունները նաև ֆակուլտետի հաջողություններն են:

Հովհաննեսը ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի մագիստրոս է, գերազանցիկ ուսանող: Ավելի քան յոթ տարի սովորել է այս ֆակուլտետում, աչքի ընկել բարձր առաջադիմությամբ և հայի տեսակին հատուկ մարդկային նկարագրով:

Արցախյան երկրորդ պատերազմի մասնակից է: Նրան հանրապետական մրցույթում շնորհվել է հայագիտության ոլորտի 2020 թ. «Լավագույն ուսանող, 2-րդ տեղ» հավաստագիրը:

Գոռ Գալստյանը Բանասիրական ֆակուլտետի մագիստրոս է: Նրան շնորհվել է հումանիտար ոլորտի 2020թ. «Լավագույն ուսանող, 1-ին տեղ» հավաստագիրը:

Շնորհավորում ենք Հովհաննեսին և Գոռին, մաղթում նորանոր հաջողություններ:

Գոռ Գալստյան

Ուսյալ զինվորականը՝ բանակի կայունության երաշխիք

Մայրենիի տոնի առթիվ Բանասիրական ֆակուլտետի ներկայացուցիչները հրավիրվել էին ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան: Ինձ համար պարտավորեցնող էր՝ հյուրընկալվել սպարապետի անունը կրող ուսումնական հաստատությունում և ելույթ ունենալ այնտեղ: Հայաստան աշխարհի առջև ծառացած այսօրվա մարտահրավերների, ռազմաքաղաքական բարդ իրավիճակի և ներքաղաքական այս խառը ժամանակահատվածում կուրսանտների կողմից ընտրված ուղին՝ դառնալ զինվորական, իրոք խրախուսանքի է արժանի: Նրանք մեր բանակի ապագա հրամանատարներն են, իսկ հրամանատարից, ինչպես վերջին պատերազմը ցույց տվեց, շատ բան է կախված: Լավ հրամանատար լինելու համար միայն առաջնորդական ձիրքը, խիզախությունն ու ցանկությունը բավարար չեն. անհրաժեշտ է ունենալ կայուն, հիմնարար գիտելիքներ: Այդ գիտելիքները չպետք է սահմանափակվեն միայն ռազմական արվեստի պատմությամբ, տեխնիկայի հետ աշխատելու հմտություններով, ֆիզիկական պատրաստությամբ ու համակարգչային կառավարման հիմունքների իմացությամբ: Այսօրվա զինվորականը, բացի նշածս ոլորտներից, պարտավոր է ունենալ հայրենասիրական, դաստիարակչական, գաղափարական ու գրական- գեղարվեստական գիտելիքների գոնե նվազագույն պաշար:

Կուրսանտներից շատերը ստանալով սպայական առաջին կոչումները, համալրելով բանակի շարքերը՝ ստանձնում են հրամանատարական ուժի կարևորագույն օղակների՝ դասակների ղեկավարությունը՝ բախվելով մի շարք խնդիրների, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ է ունենալ տարաբնույթ գիտելիքներով ու կարողություններով համեմված կրթություն: Լավ հրամանատարը, մեր կարծիքով, պետք է լինի նաև հոգեբան, մանկավարժ, ինչու չէ՝ պատմաբան, աշխարհագետ ու գրականագետ:

Հայոց բանակի ստորաբաժանումները համալրված են 18-20 տարեկան տարբեր բնավորության, գիտելիքների պաշարով, հուզական տարաբնույթ հատկանիշներով օժտված ու տարբեր առանձնահատկություններ ունեցող երիտասարդներով: Այստեղ հրամանատարին օգ-

նության կգան հոգեբան-մանկավարժի ունակությունները: Նա պարտավոր է ծանոթ լինել իր ստորաբաժանման կազմում ընդգրկված յուրաքանչյուր զինծառայողի հոգեբանական առանձնահատկություններին, անհրաժեշտության դեպքում կիրառել մանկավարժական տարբեր մեթոդներ՝ այս կամ այն խնդրահարույց իրավիճակից պատվով դուրս գալու համար:

Սպայի համար անհրաժեշտություն է՝ ծանոթ լինել հայոց, ինչպես նաև համաշխարհային պատմության կարևորագույն դրվագներին, որպեսզի իր ենթականերին ներարկի այդ գիտելիքների պակասը:

Մարտական հերթապահության իրականացման ընթացքում առանց աշխարհագրական տարրական գիտելիքների, իրապես, դժվար կլինի անթերի կատարել առաջադրված խնդիրները, օրինակ՝ տեղանքում կողմնորոշվելը:

Գուցե զարմանալի թվա, բայց լավ զինվորականին շատ դեպքերում ծառայության ընթացքում օգնության են գալիս կարդացած գրքերը: Բանակում, ճիշտ է, ազատ ժամանակ շատ քիչ է լինում, սակայն օրվա կարգացուցակով նախատեսված գործողությունների կատարումից հետո մնացած ժամանակը կարելի է նվիրել ընթերցանությանը կամ էլ զրույցների միջոցով զինվորներին հայ և համաշխարհային գրականության հետաքրքիր գործերին ծանոթացնելուն:

Նշածս բոլոր ոլորտների մասին տարրական գիտելիքները տարիներ առաջ Հայոց բանակում ավանդվում էր հասարակական պետական պատրաստություն առարկայի միջոցով: Սակայն, մեր հարցումներից պարզ դարձավ, որ այն ուսումնական առարկայացանկերից վերջին տարիներին հանվել է: ՀՊՊ-ի միջոցով զինվորները ծա-

նոթանում էին հայ ժողովրդի պատմության հերոսական էջերին, ճանաչում էին ազգային հերոսներին, նախկին պատերազմների փառապանծ դրվագներին, ինչպես նաև հայ, ինչու չէ, համաշխարհային գրականության կարևորագույն հեղինակներին և նրանց ստեղծագործությունները: Այդ առարկայի շնորհիվ զինվորականները, ծանոթանում են նաև թշնամու պատմությանը, որը մարտադաշտում մոտիվացնող է յուրաքանչյուր կռվողի համար: Միջոցառումն առիթ ընծեռեց ևս մեկ անգամ բարձրաձայնելու այս խնդրի մասին: Մենք առաջարկեցինք պատկան մարմիններին բանակի ուսումնական պլաններում, թեկուզ քիչ ժամաքանակով, սակայն պարտադիր ներառել «Հասարակական պետական պատրաստություն» առարկան, որպեսզի հայ զինվորը ճանաչի Մովսես Խորենացուն, Եղիշեին և այլ պատմիչների, նրանց միջոցով՝ հայ փառապանծ թագավորներին ու զինվորականներին: Հայ զինվորը պիտի իմանա Գրիգոր Նարեկացուն և միջնադարի մեր մյուս հեղինակներին, նոր գրականության ներկայացուցիչներին, Ռաֆֆու կերտած հայրենասեր հերոսներին և Արցախի առաջին և երկրորդ պատերազմների, Ապրիլյան քառօրյայի մեր բոլոր հերոսներին: Այդ շրջանակներում կարելի է համագործակցություն ստեղծել Պաշտպանության նախարարության, ռազմական ուսումնական հաստատությունների և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի տարբեր ֆակուլտետների միջև, ստեղծել բազմամասնագիտական խմբեր՝ ներառելով շահագրգիռ բոլոր անձանց:

Եվս մեկ անգամ շնորհավորելով բոլորիս Մայրենիի տոնի առթիվ՝ ուզում եմ ավելացնել, որ լավ հրամանատարը պարտավոր է խոսել ճիշտ և գրական հայերենով՝ տալով գրագետ, իմաստուն և խելացի հրամաններ: Հրամանատարի մեկ ոգևորիչ, հայրենասիրական ելույթը կարող է ահռելի դեր խաղալ տարբեր իրավիճակներում, և՛ խաղաղ, և՛ պատերազմական: Հիշենք նախահայր Հայկի, Վարդան Մամիկոնյանի և մեր մյուս առաջնորդների ոգեշունչ, իմաստուն խոսքերը՝ ուղղված իրենց ենթականերին:

Հորդորում եմ զինվորական ուղին ընտրած բոլոր կուրսանտներին՝ լա՛վ սովորեք, դարձե՛ք բազմակողմանի զարգացած հրամանատարներ, քանզի ուսյալ, կրթված զինվորականը բանակի կայունության երաշխիքներից մեկն է:

Ի դեպ, ինձ՝ Արցախյան երկրորդ պատերազմին մասնակցելիս շատ օգնեց Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետում սովորելու փաստը՝ տարբեր իրավիճակներում մտածված և կշռադատված որոշումներ կայացնելու և մարտական խնդիրները գրագետ իրականացնելու տեսանկյունից:

2021 թվականը ձեռքբերումներով եմ սկսել: Հունվարին հաջողությամբ պաշտպանեցի «Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության դաստիարակչական արժեքը» խորագրով մագիստրոսական թեզը՝ ստանալով գերազանցության դիպլոմ՝ մասնագիտական մանկավարժության մագիստրոսի որակավորումով: Մասնակցեցի ԿԳՄՍ նախարարության կազմակերպած «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթին՝ մագիստրոսների շրջանում «Հայագիտության ոլորտի 2-րդ մրցանակ» շահելով: ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ղեկավարության կողմից արժանացա պատվոգրի: Այս բոլոր հաջողությունների համար պարտական եմ իմ սիրելի համալսարանին՝ ղեկավարությանը, վարչական անձնակազմին, հարազատ Բանասիրական ֆակուլտետում դասավանդող պրոֆեսորներին և դասախոսներին՝ բոլոր պարագաներում և տարբեր իրավիճակներում ինձ սատարելու և իմ թիկունքին կանգնած լինելու համար:

Պատիվ ունեմ:

Հովհաննես ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻԻ ՕՐԸ՝ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում մեծ շուքով և հանդիսավորությամբ նշվեց «Մայրենի լեզվի միջազգային օրը»: Ուսումնական հաստատության դասախոսական կազմի և կուրսանտների ջանքերով կազմակերպված միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի ներկայացուցիչները:

Բացման խոսք ասաց ռազմական համալսարանի գնդերեց Տեր Պսակ քահանա Մկրտչյանը: Մայրենի լեզվի օրվա առթիվ ելույթ ունեցավ ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը: «Ազգային հերոսները գրականության մեջ» թեմայով զեկույցով հանդես եկավ ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի Վաչե Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ Լուսինե Գալստյանը:

ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի մագիստրոս Հովհաննես Սարգսյանը կուրսանտների հետ զրույց վարեց «Ուսյալ զինվորականը՝ բանակի կայունության երաշխիք» թեմայով: Զեկուցումներն ընդմիջվում էին կուրսանտների երաժշտական, ասմունքային կատարումներով, հայոց լեզվի մասին հայտնի մարդկանց արտահայտած մտքերից մեջբերումներով:

Միջոցառման ընթացքում ամփոփվեցին կուրսանտների շրջանում անցկացված հայրենասիրական թեմայով շարադրությունների մրցույթի արդյունքները: Լավագույններին պարգևատրվեցին պատվոգրերով և մրցանակներով: Ռազմական համալսարանի պետ, գնդապետ Խաչատուր Խաչատրյանը պատվոգրեր շնորհեց նաև միջոցառմանը մասնակից ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի ներկայացուցիչներին:

Այցի շրջանակներում ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը, գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Կարեն Խանյանը, դոցենտ Լուսինե Գալստյանը և դեկանատի մասնագետ Հովհաննես Սարգսյանը ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետ, գնդապետ Խաչատրյանի և գիտության գծով պետի տեղակալ, գնդապետ Ասրյանի հետ քննարկեցին Բանասիրական ֆակուլտետի և ռազմական համալսարանի միջև շարունակական փոխհամագործակցության, համալսարանների դասախոսների մանկավարժական փորձի և մեթոդների փոխանակման, փոխայցելությունների հաճախակիությանը միտված հարցեր: Ռազմական համալսարանի ղեկավարությունը հույս հայտնեց, որ այսպիսի այցելությունները շարունակական կլինեն երկրի համար ռազմավարական դեր ու կարևորություն ունեցող երկու բուհերի միջև:

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Հերիքնազ ԽԱՉԻԿՅԱՆ.

Կուռմադդումներին շունչ ու ազգային դիմագիծ տվողը

- Սիրելի Հերիքնազ, սոցիալական հարթակներում հետևում եմ քո մասնագիտական զարգացմանն ու գործունեությանը: Հետաքրքիր է իմանալ՝ մեր բուհն ավարտելուց հետո ինչո՞վ է զբաղվում շրջանավարտը և հատկապես տաղանդավոր շրջանավարտը:

Կպատմե՞ս՝ ինչ տվեց քեզ Մանկավարժականում ուսումնառությունդ և ինչով ես զբաղվում հիմա:

- Բուհն ավարտելուց հետո շատ քիչ աշխատել եմ բազմասենսորային մանկական զարգացման կենտրոնում և տիկնիկների պատկերասրահում, աշխատանքին զուգահեռ, զարգացրել դդմարվեստը որը մինչ այդ էլ ուսումնառության տարիներին փորձում էի զարգացնել և տարածել:

- Քո հետաքրքրությունները բազմազան են, հատկապես կուռմադդումներին նոր կյանք հաղորդելու շնորհդ մասնագիտական հմտություններիդ համադրմամբ բավականին ճանաչելի է դարձրել քեզ: Ի՞նչ կասես այդ մասին:

- Այո. իմ հետաքրքրությունները բազմազան են, դդմարվեստի զարգացման հետ մեկտեղ հետաքրքրված եմ արշավներով, բացահայտում եմ հայրենիքիս ամեն գողտրիկ անկյունն ու փորձում զարգացնել նաև մանկական արշավները, որոնց դերը երեխայի կյանքում շատ կարևոր է:

- Ինչպե՞ս են ծնվում մտահղացումներդ՝ հերթական կուռմադդումին ինչ տեսք տալ: Ախր դու այնքան կիրառելի ես դարձնում դրանք: Եվ քո ստեղծած կերպարներից որո՞նք են ամենահաջողվածները կամ առավել սիրելի դարձածները, որոնցից դժվար է բաժանվել:

- Դդմարվեստով զբաղվել եմ մինչ համալսարան ընդունվելը, իսկ համալսարան ընդունվելն իմ առաջ բազում դռներ բացեց, կարելի է ասել լայնացրեց իմ մտքի ճանապարհը: Մանկավարժական համալսարանում ձեռք բերեցի մասնագիտական մեծ գիտելիքներ և հմտություններ, և այս ամենի մեջ իրենց ուրույն, անգնահատելի դերն ունեն իմ շատ սիրելի դասախոսները, ովքեր իրենց գիտելիքներով մինչ օրս էլ իմ կողքին են:

Մասնագիտական հմտությունների համադրմամբ դդմարվեստը զարգացավ, և մինչ օրս էլ փորձում եմ փնտրել նորանոր ուղղություններ ու նոր եղանակներ դդմարվեստն էլ ավելի հասու դարձնելու հասարակությանը: Դդմարվեստը դեկորատիվ կիրառական արվեստ է, պարզապես մեր երկրում այնքան էլ ճանաչելի չէ, բայց մեր նախնիները հնում կուռմադդումները շատ են կիրառել կենցաղում:

Այսօր ես զարգացնում և օր օրի փորձում եմ էլ ավելի կիրառելի դարձնել կուռմադդումները (շշադդում, ջոգրա, կալաբաշ, գուարդ, խուլլու) և ամենակարևորը՝ մեր ազգային շունչն ու դիմագիծը սնուցել յուրաքանչյուր գործին:

Չեմ կարող ասել որոնք են ամենահաջողվածները որովհետև բոլոր նմուշներն էլ սիրվել են շատերի կողմից, և քանի որ կուռմադդումների կաղապարը թույլ է տալիս ստեղծել անգամ անհնարին թվացող կիրառելի բազում իրեր, մարդիկ էլ ավելի շատ են սկսել ճանաչել ու սիրել դդմարվեստը: Իսկ աշխատանքներից բաժանվում եմ միայն սիրով, որովհետև գիտեմ, որ էլ ավելի մեծ տարածում է գտնում:

- Կուռմադդումների ձևավորումը և դրանք կիրառելի դարձնելու աշխատանքային գործունեությունդ քեզ դարձրել է ձեռներեցությամբ զբաղվող անհատ: Դա շատ լավ է մեր օրերում, երբ դժվար է աշխատանք գտնել, հատկապես այնպիսի աշխատանք, որից նաև հաճույք ստանաս, ոչ միայն դրամ վաստակես...- Կարողանո՞ւմ ես գտնել սպառման շուկաներ: Եվ արդյո՞ք քո աշխատանքի պտուղները հասանելի են Հայաստանից դուրս գնելու ցանկություն ունեցողներին...

- Ես այս գործն անելով երբեք չեմ մտածել գումար վաստակելու մասին, ես ավելի հակված եմ այս գեղեցիկ արվեստը հնարավորինս հասու դարձնել հասարակությանը, անվճար վարպետաց բազում դասեր եմ անցկացրել դպրոցներում, զարգացման կենտրոններում և շատ անհատների հետ, և ինձ համար առաջնայինը մեր գեղեցիկ արվեստի ճյուղը փրկելն ու հանրահռչակելն է: Կուռմադդումների պահանջը շատ մեծ է. արագ են սպառվում, անգամ աճեցրած կուռմադդումները չեն բավականացնում, իսկ կուռմադդումների երկրպագուների բանակը գնալով մեծանում է: Այսօր դա է իմ աշխատանքը, սիրով եմ կատարում իմ գործը, քանի որ միևնույն ժամանակ և՛ վերականգնում եմ, և՛ ուսուցանում, և՛ վաճառում:

Եվ, այո, իմ աշխատանքի պտուղները դեռ վաղուց հասանելի են նաև Հայաստանից դուրս ապրողներին:

- Նոր մտահղացումներ ունե՞ս, չե՞ս մտածում նաև ցուցահանդեսների կազմակերպման մասին:

- Նոր մտահղացումներն անսահման շատ են, բայց կկատարվեն ժամանակի ընթացքում, ինչպես նաև երրորդ անհատական մեծ ցուցահանդեսը:

- Որպես ամփոփում՝ ինչի՞ մասին կուզեիր խոսել: Եվ ի՞նչ խորհուրդ կտաս համալսարանի ուսանողներին ու շրջանավարտներին:

- Իսկ համալսարանի ուսանողներին և շրջանավարտներին խորհուրդ կտամ ավելի համբերատար լինեն և համալսարանում ապրած ամեն ժամն ու վայրկյանը բարձր գնահատեն, ջանասիրաբար աշխատեն, անտեսելով բոլոր խոչընդոտները:

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ԴԵՊԻ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Ավետիք ԿԱՐՃԻԿՅԱՆ

Խորը վշտով տեղեկացանք, որ հայտնաբերվել է անհետ կորած համարվող Ավետիք Կարճիկյանի աճյունը: Ավոն երկու տարի առաջ ավարտել էր Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի իրավագիտության բաժինը:

Ավետիքը Մոբով զորակոչվել է, սկզբում Սիդիան, հետո տեղափոխվել Մեխակավան:

Նա շատ ուշիմ, սովորող, հետաքրքրասեր ու ժպտերես ուսանող էր, սիրված էր բոլորի կողմից:

Զինծառայության ընթացքում նրան ասում էին դոկտոր, քանի որ բոլորին հասնում էր, օգնում վիրավորներին. մայրը բժշկուհի է եղել, որոշակի բժշկական գիտելիքներ ուներ և կիրառում էր պատերազմի օրերին, պատմում են զինակից ընկերները:

Նա Առաջին հանրապետության պետական գործիչ Խաչատուր Կարճիկյանի ազգականն էր:

Խորապես ցավակցում ենք ծնողներին, հարազատներին, կուրսընկերներին, բոլոր ճանաչողներին:



Նարեկ ՎԱՐՈՍՅԱՆ

Պատերազմն անտանելի չարիք է, որի ոչ միայն ընթացքն է ցավոտ, այլև հետևանքները, և մարդիկ դա զգում են տարիներ շարունակ:

Անմեղ կյանքեր, կիսատ մնացած ճակատագրեր, մեծ ցավ ու կարոտ կա յուրաքանչյուրիս սրտում:

...Խորը վշտով տեղեկացանք, որ պատերազմը խլեց նաև մեր ֆակուլտետի ուսանողներից մեկի՝ Նարեկի կյանքը՝ մեծ ցավ ու կարոտ թողնելով նրան ճանաչողների սրտերում:

Նարեկն աշխարհագրության բաժնի ուսանող էր, մեկ կիսամյակ սովորելուց հետո զորակոչվել էր բանակ: Սեպտեմբերի 27-ից համարվում էր անհետ կորած, սակայն ընկերներն ու հարազատները հույսով ու հավատով սպասում էին, որ նա գտնվելու է: Ավա՜ղ, զոհվեց ու մնաց որպես լույս՝ իրեն ճանաչողների սրտերում:

Կուրսընկերները ցավով ասում են, որ շատ կկարոտեն իրենց կյանքով լեցուն, հոգատար, բարի ու խիզախ ընկերոջը, ով իր հարազատ մարդկանց կողքին էր ամեն պահի:

Ցավակցում ենք Նարեկի հարազատներին, ընկերներին, դասախոսներին ու բոլոր նրանց, ովքեր ճանաչել են նրան:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ

Ուսանողների գիտական նիստում

Փետրվարի 24-ին, Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի ուսանողական խորհրդի, ֆակուլտետի դեկանատի, ինչպես նաև քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ ՀՊՄՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում անցկացվեց գիտական նիստ՝ «Իրազեկում և արդիականացում» խորագրով:

Ֆակուլտետի դեկան Ռուզաննա Սադոյանը և ամբիոնի վարիչ Սամվել Պիպոյանը ողջունեցին ներկաներին և բացման խոսք ասացին:

Գիտական զեկուցումներով հանդես եկան կենսաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող Մարինե Դալլաքյանը՝ «ԴՆԹ շտրիխկոդավորումը (բարկոդինգը) որպես Հայաստանյան կենսաբազմազանության բացահայտման նոր գործիք», և «Կենսաբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Քնարիկ Համբարձումյանը՝ «Փոքրասիական տրիտոնի (Ommatotriton ophryticus) կենսաբանաէկոլոգիական առանձնահատկությունները և նրա պահպանության հիմնախնդիրները Հայաստանում» թեմաներով:

Զեկուցումներին հաջորդեց հարց ու պատասխան. ուսանողներն իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին զեկուցողներին:

Իրենց տեսակետները ներկայացրին նաև աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Աշոտ Խոյեցյանը և մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տիգրան Թանգամյանը:

Դեկան Ռուզաննա Սադոյանը և ամբիոնի վարիչ Սամվել Պիպոյանը հավաստիացրին, որ առաջին փոքրիկ փորձը հետագայում հիմք կդառնա մեծ ծրագրերի և կկրի շարունակական բնույթ:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ
Ֆակուլտետի լրատվական հանձնաժողովի ղեկավար

Հավերժի բանաստեղծը

Փետրվարի 19-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի N 57 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Անուշ Արսենյանը և երգչախմբի ղեկավար Ազնիվ Բարեղամյանը 5-րդ «բ» դասարանի աշակերտների մասնակցությամբ կազմակերպել էին գեղեցիկ միջոցառում՝ նվիրված Ամենայն հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին:

Միջոցառման ընթացքում հնչեցին ասույթներ՝ նվիրված մեծանուն գրողին, բեմադրեցին հատված «Անուշ» պոեմից, ներկայացրին քառյակներ, երգ, պար, երաժշտություն: Թևածում էր թումանյանական ոգեղեն շունչը:

Տոնական, բովանդակալից ու հոգեպարար միջոցառումը հիացմունք պատճառեց ներկաներին:

Ողջունելով աշակերտներին և շնորհակալություն հայտնելով հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Անուշ Արսենյանին և երգչախմբի ղեկավար Ազնիվ Բարեղամյանին՝ դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանն իր խոսքում ընդգծեց նման միջոցառումների կարևորությունը, ինչը նպաստում է Թումանյանի ստեղծագործությունների ճանաչմանն ու նորովի արժևորմանը:

Թերթելով անցյալի էջերը

ԷՄՄԱ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Խմբավար, մանկավարժ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Էմմա Ծատուրյանը ծնվել է 1920 թվականին, Բաքվում: Երկու ծնողներն էլ երաժշտական առումով օժտված մարդիկ էին: Ծնվելով Բաքվում՝ Էմմա Ծատուրյանն ինքնուսուցմամբ դարձավ գրաճանաչ, սովորեց արհեստ, ինչպես և նվագել: Կարևորելով իր երեխաների հայեցի դաստիարակման խնդիրը, Էմմայի հայրը 1922 թվականին ընտանիքով տեղափոխվում է Հայաստան և հատատվում Դիլիջանում, որտեղ ապրում էին իր կնոջ ծնողները: 1930-ական թթ. ընտանեկան խորհրդի որոշմամբ և իր երեխաների ըմբռնումներին համապատասխան՝ ասպարեզներ են ընտրվում: Էմմային բաժին է հասնում քիմիան: Հայրն անտեղյակ էր, որ ամենակրտսեր դուստրն իր բացակայության ժամանակ ամբողջովին տարված է երգով: Ռադիոն աղջնակի համար երգի հիմնական ուսուցիչն էր: Այդպես նա բազմաթիվ նորաստեղծ երգեր է սովորում, իսկ հետո նաև սովորեցնում է իրենց բակի երեխաներին: Երգելով պիոներական հավաքին՝ նա սկիզբ է դնում իր երաժշտական կարիերային: Այդ ժամանակ Էմման ընդամենը 13 տարեկան էր: Սովորելով քիմիական տեխնիկումում՝ նա 1936 թվականին ելույթ է ունենում ինքնուս կատարողների ստուգատեսում, որի ղեկավարն էր երիտասարդ կոմպոզիտոր Մ. Չաղալյանը, ով հետագայում դառնում է Էմմա Ծատուրյանի երաժշտության առաջին պրոֆեսիոնալ ուսուցիչը: Նրա նախաձեռնությամբ Էմմա Ծատուրյանն ընդունվում է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան: Ուսումնարանն ավարտելուց հետո ընդունվում է կոնսերվատորիայի խմբավարական բաժինը, որն ավարտում է 1951 թվականին:

1959-ին է. Ծատուրյանի ջանքերով ստեղծվում է Հայաստանի երգչախմբային ընկերությանն առընթեր ինքնագործ երգչախումբ, որում ընդգրկվածների թիվը հասնում էր հարյուրի: Խմբավարական աշխատանքներին զուգահեռ է. Ծատուրյանը զբաղվում է նաև մանկավարժությամբ: 1958-ին նա հրավիրվում է Մանկավարժական ինստիտուտ որպես խմբավարության ամբիոնի դասախոս: 1964-ից դառնում է ինստիտուտի մշտական երգչախմբի գեղարվեստական ղեկավարը, 1971-78 թվականներին՝ ամբիոնի վարիչը: 1971 թ.-ին նրան շնորհվում է դոցենտի, իսկ 1978 թ.-ին՝ պրոֆեսորի կոչում:

Նա մեծ հաջողություններ է գրանցել Մանկավարժական ինստիտուտի քառաձայն երգչախմբի ղեկավարման գործում: Այս կոլեկտիվի հետ նա նպաստել է երգչախմբային արվեստի պրոպագանդման և երիտասարդ սերնդի գեղագիտական դաստիարակման գործին, միաժամանակ բարձրացնելով իր մասնագիտական մակարդակը: Մանկավարժական ինստիտուտի երգչախմբի հետ աշխատանքի լավագույն արդյունքն էր երգչախմբի մասնակցությունը երգի հանրապետական տոներին, օլիմպիադաներին, փառատոններին, մրցույթներին, հեռուստատեսությամբ և ռադիոյով ելույթներին:

1977-1987 և 1990-1991 թվականներին եղել է հայկական ժողովրդական երգի-պարի համույթի գեղարվեստական ղեկավարը: 1985 թվականին արժանացել է ՀՀ պետական մրցանակի, 1994 թվականին՝ հոգևոր երաժշտության միջազգային փառատոնի 1-ին մրցանակի: 1967 թվականին արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի, իսկ 1982 թվականին՝ Հայաստանի ժողովրդական արտիստի կոչման:

Էմմա Ծատուրյանի գեղագիտական սկզբունքները, արվեստագետ-քաղաքացու նրա մտահոգությունները, կապված լայն շերտերի գեղագիտական դաստիարակման, հատկապես հայ երգչախմբային արվեստի զարգացման հետ, արտահայտվել են ոչ միայն խմբավարի պրակտիկ գործունեության մեջ, այլև հոդվածներում ու հրապարակային ելույթներում:

Էմմա Ծատուրյանը մահացել է Կիևում, թաղված է Երևանում:

Լիլիթ ՍԵՓՅԱՆ
ՀՊՄՀ թանգարանի ավագ գիտաշխող

Հայաստանը քար է: Որտեղ ոտք դնես՝ քար է զրնգում: Ամեն կողմ, ամեն տեղ: Լեռներ, ժայռեր, լեռներ, ժայռեր: Այծերը երկու հարյուր արշին վեր պետք է բարձրանան, քարերի միջից երկու խամրած խոտ պոկելու համար: Եվ եթե մարդ համառություն չունի և չունի այն, որ անվանում են հայրենիքի սեր, այստեղ չի կարող ապրել: Այստեղ ապրելու համար սեր պետք է, կրակ պետք է, եզան ճակատով խևություն պետք է… Վերջապես, եղբա՛յր, այս քարերը մենք սիրում ենք, դարեր կապվել ենք նրանց հետ և չենք ուզում բաժանվել… պետք ունենք նրանց, և նրանք էլ պետք ունեն մեզ:

Կոստան ԶԱՐՅԱՆ



Դասախոսը՝ ուսանողի աչքերով.

Մարո Քոչարյան

ԿԱՐԵՎՈՐԵԼՈՎ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՁԳՏՈՒՄԸ

«Լինել ուսանողի կողքին, ամեն հարցով օգնել և աջակցել նրան՝ պահպանելով դասախոս-ուսանող հարաբերությունների սահմանը»: Հենց այս բանաձևով է առաջնորդվում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դասախոս, դոցենտ Մարո Քոչարյանը, ով անցնելով կյանքի բազմաթիվ ճանապարհներով, ի վերջո 2002 թվականից աշխատանքի է անցել Մանկավարժական համալսարանում: Եվ արդեն բավական երկար ժամանակ է, ինչ դասավանդում է կենդանաբանություն, որն ըստ նրա՝ «մեր շուրջը գտնվող բազմաթիվ գաղտնիքների բանալին է, քանի որ օգնում է բացահայտել մարդու և բնության կապը և մշտապես առաջ մղում, օգնելով հասկանալ և նկատել ավելին, քան տեսնում ենք իրականում»:

Տարիների ընթացքում ձևավորելով սեփական մոտեցումներն ու դասավանդման մեթոդները՝ նա կարողացել է սիրվել ուսանողների կողմից, որոնց կարողանում է հասկանալ առաջին իսկ պահից: Ցանկացած ուսանողի մեջ կարևորելով բարությունը, ազնվությունն ու սովորելու ձգտումը՝ Մարո Քոչարյանը նշում է, որ ուսանողն առաջին հերթին պետք է լինի կիրթ, ցանկացած հարցում կարողանա դրսևորել գրագետ մոտեցում, երբեք չբավարարվի գրքում եղածով և փնտրի ավելին: Դասերի ժամանակ մշտապես հարցնի, հետաքրքրվի և այդ ամենից շատ բան սովորի: Ինչու ոչ, նաև որոշակի հարցերում համաձայն չլինի և արտահայտի սեփական մոտեցումները: Եվ միայն այդ դեպքում նա կարող է իրապես ուսանող համարվել: Դասախոսն էլ իր հերթին պետք է մշտապես լինի ուսանողի կողքին, երբեք չմոռանա, որ նրանցից յուրաքանչյուրն իր ընտանիքի կարևոր մասնիկն է ու հարստությունը: Նրանց օգնի՝ երբ կսայթաքեն, ուղղի՝ երբ կսխալվեն և այդ ամենից հետո, երբ նրանցից ոմանք կգերազանցեն իրեն, դա կլինի իր աշխատանքի մեծագույն արդյունքը:

Այս ամենով հանդերձ, Մարո Քոչարյանը կարողանում է դառնալ ուսանողի լավագույն ընկերն ու աջակիցը, դրան նպաստում են նաև գործնական դասերը և ուսումնական պրակտիկաները: Եվ, ի վերջո, իր և ուսանողների միջև ստեղծվում է շատ ամուր ու վստահելի կապ, որը տարիների ընթացքում էլ ավելի է ամրանում, իսկ իր խորհուրդները մշտապես լինում են նրանց կյանքի ուղեկիցները:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐՎԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Փետրվարի 21-ին ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում անցկացվեց հերթական բաց դասը՝ նվիրված «Գիրք նվիրելու և Մայրենի լեզվի միջազգային օրերին»:

Դպրոցի աշակերտները տեղեկացան հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի գործունեությանը, ծանոթացան 1512 թվականին Վենետիկում տպարգրված «Ուրբաթագիրք» առաջին հայերեն տպագիր գրքին, որը բաղկացած է 124 էջից և 24 վերնախորագրային զարդանախշերից: 2012 թվականին Հայաստանում, երբ նշվեց հայ տպագրության 500-ամյակը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանին շնորհվեց «Գրքի համաշխարհային մայրաքաղաքի» տիտղոսը, որի շրջանակներում Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանի բակում (հիմնադրվել է 1933 թ.), տեղադրվեց «Ընթերցողին» հուշարձանը (հեղինակ՝ Արման Դավթյան (Նուռ) և «Վարք հավերժության» բրոնզե հուշարձանը (քանդակագործ՝ Դավիթ Երևանցի, ճարտարապետ՝ Ռուբեն Հասրաթյան)՝ նվիրված «Մշո ճառընտիր» գրքի փրկության պատմությանը (այժմ պահվում է Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում), որը հայոց գրերի պահպանման խորհրդանիշներից մեկն է:

Դպրոցի տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանի հրավերով Մոսկվայի Արևելքի պետական թանգարանի գիտաշխատող, թանգարանային-կրթական գործունեության մեթոդիստ Եկատերինա Սիմատովան հանդես եկավ բովանդակալի խոսքով՝ «Հայկական ձեռագրեր և մանրանկարչություն» թեմայով: Տպավորիչ էր, որ նույնիսկ օտարերկրյա մասնագետներն այդքան մանրակրկիտ ուսումնասիրում են հայոց գրերի գյուտը և մանրանկարչության գաղտնիքները՝ սկսած քրիստոնեությունից մինչև Մեսրոպ Մաշտոցի՝ երկաթագիր տառերի ստեղծումը, ընդհուպ մինչև Թորոս Ռոսլին, Կիլիկյան թագավորության ժամանակաշրջան:

Դասախոսությունը համահունչ էր օրվա խորհրդին:

ՄԵՐ ՀՅՈՒՐՆ ԷՐ ԳՐՈՂ, ԳՐԱԿԱՆԱԳԵՏ ՀՈՎԻԿ ՉԱՐԽՉՅԱՆԸ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳՐՔԻ ԵՎ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սկզբնական կրթության, ինչպես նաև Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետների 1-ին կուրսի ուսանողները «Հայոց լեզու և գրականություն» առարկայի շրջանակներում լեզվական նյութերն ուսումնասիրում են գրական տեքստերի միջոցով: Այդ իսկ պատճառով գրական տեքստերի ընտրությունը կատարվում է խիստ ընտրանքով՝ հաշվի առնելով ոչ միայն թեմատիկան, այլև գրողի լեզուն և ոճը, ինչպես նաև դրանց կրթական և դաստիարակչական նշանակությունը: Դասընթացի շրջանակներում սովորողները ծանոթանում են ժամանակակից գրողների հետ, ուսումնասիրում նրանց լավագույն ստեղծագործությունները, որոնց մեջ էր նաև Հովիկ Չարխչյանի «Սուլամիթա. Սևակի մեծ սերը» փաստագրական վեպը՝ Պարույր Սևակի և Սուլամիթա Ռուդնիկի նամականին: Նախատեսված էր, որ վարպետաց դասի քննարկման թեման պիտի լիներ հենց այդ ստեղծագործությունը, սակայն հանդիպման ընթացքում քննարկված նյութը շատ բազմաշերտ էր, խորը և դաստիարակչական. հեղինակը խոսեց առհասարակ գրականության, գրքի և ընթերցանության, ինչպես նաև դրանց պահանջների մասին:

Հովիկ Չարխչյանը նշեց, որ գրականությունը բառի, մտքի, լեզվի, ոճի յուրահատուկ խաղ է, ոչ թե լոկ զգացմունքների: Քննարկվեց ահռելի քանակի գրականությունից ճիշտ ընտրություն կատարելու հարցը՝ արդյո՞ք շատ ընթերցելը որակյալ գրականություն ընթերցելու գրավականն է, հակադրվեցին կարդացողն ու որակյալ ընթերցողը: Կարևորվեց նաև ընթերցանության շարունակականությունը, ինչը նույնպես շատ կարևոր է համակարգված գիտելիքի ձևավորման հարցում: Բանախոսը նշեց նաև, որ ընթերցանությունը հոգևոր պահանջով պիտի թելադրված լինի, ոչ թե պարտադրաբար, այլապես անօգուտ աշխատանքի պիտի նմանվի՝ օրինակ բերելով աշխարհի լավագույն ընթերցողներ Լև Լանդաուին և Ալբերտ էյնշտեյնին: Զրույցը նաև դաստիարակչական էր, քանի որ կարևորվեց նաև հարուստ գիտելիքը մարդկության բարօրությանը ծառայեցնելու հարցը, այլապես այն վտանգավոր և կործանարար կարող է լինել: Գիտելիքի պաշարով է պայմանավորվում մարդ-անհատի տեսակն ու բնույթը:

Խոսելով գրողի գեղագիտական, փիլիսոփայական համակարգերի և արժեհամակարգերի մասին՝ Հովիկ Չարխչյանը կարևորեց կենսագրական գրականության դերն ու նշանակությունը, որի առաքելությունը գրողին ամբողջացնելն է, այն նաև փոքրիկ պատուհան է, որը բացվելով հնարավորություն է տալիս ընթերցողին խորը ներթափանցելու գրողի աշխարհը, մոտենալու և հարազատանալու նրա հետ:

Գրականագետն անդրադարձավ «Սուլամիթային», նշեց, որ վեպի հիմնական նպատակը գրողի անտիպ էջերը՝ նամականին, տպելն էր, որով էլ պիտի ամբողջանար Պարույր Սևակը: Հարկ է նշել, որ հեղինակը յուրահատուկ հնարանքով և հյուսվածքով նամականին բարձրացրել է գեղարվեստի աստիճան՝ այն դարձնելով վեպ: Այս երևույթը բացառիկ է ինչպես հայ, այնպես էլ ռուս և արտասահմանյան գրականության պարագայում:

Խոսեցինք նաև «Չարենցի կրակոցը» գրքին մասին, հեղինակը նշեց, որ փոքրիկ դրվագով՝ ընդամենը մեկ տարվա պատմությամբ (1926 օգոստոս-1927 օգոստոս), գրքում ամբողջացել է ամբողջական Չարենցը՝ իր էությամբ, մեծությամբ, ողբերգությամբ, ամբողջական ապրումներով և խորությամբ: Անշուշտ, փաստագրական վեպերը պարունակում են ինչպես վավերագրական, այնպես էլ սեղծագործական տարրեր, քանի որ վերնագրված է ոչ թե փաստագրական-գիտական ուսումնասիրություն, այլ հենց փաստագրական վեպ, իսկ վերջինս գրական ժանր է, ինչն էլ ենթադրում է գրողի երևակայության տարրեր: Նշված երկու կենսագրական գրքերը մի կողմից ամբողջացնում են տվյալ հեղինակի կենսագործունեությունը, մյուս կողմից կարևորում սերն արվեստի մակարդակի բարձրացնելը, սովորեցնում գեղեցիկ սիրել, սիրել ասպետի սիրով, կարողանալ հոգով հոգին սիրել, ինչը մեր օրերում շատ է պակասում:

Ամփոփելով իր զրույցը՝ գրողը կարևորեց Մանկավարժական համալսարանի և մանկավարժի դերն ու նշանակությունը մարդու կյանքում: Նա նշեց, որ ակնկալում է և լիահույս է, որ մեր այսօրվա ուսանողները, ովքեր վաղվա մանկավարժներն են, պիտի կարողանան տալ աշխարհին հենց այն, ինչն այսօր պակասում է:

Հեղինակը բացեց շատ գաղտնիքներ, խոսեց նաև առաջիկա գրքերի, ծրագրերի մասին, իսկ հանդիպման ավարտին անակնկալ մատուցեց մասնակից դասախոսներին և ուսանողներին՝ մեծ սիրով նվիրելով իր «Ես ենթակա, գրում եմ՝ ստորոգյալ» գիրքը:

Կարծում ենք՝ հանդիպումը դեռ երկար է հիշվելու, դրա մասին ապագա մանկավարժ մեր ուսանողները դեռ սերնդեսերունդ պատմելու են իրենց սաներին, կիսվելու են ջերմ ու վառ տպավորություններով:

Արմենուհի ՄԽԻԹԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՏԵՍԱԿԵՏ

Հանուն կրթության զարգացման

Կրթության մակարդակի և որակի բարձրացման համար անհրաժեշտ են համապատասխան միջոցներ, ինչպես օրինակ, ուսուցիչների կողմից նյութի լիարժեք մատուցում, մանկավարժական հմտություններ, հանրամատչելի գրականություն և այլն:

Կրտսեր դասարաններում երեխաները ծեծված ու նախորդ դարին բնորոշ տարբերակներով են ուսանում՝ շատ հաճախ զրկվելով սեփական կարծիքի ձևավորումից, իրենց նախասիրություններով զբաղվելուց… Այդ ամենն արդեն վերածվել է համընդհանուր «փտախտի», մինչդեռ աշակերտներին հարկավոր են այլընտրանքային միջոցներ, հոգեբանադաստիարակչական աջակցություն, հետո միայն ծրագրային նյութերի յուրացում:

Հիմնական ուսուցման համար նախատեսված դասագրքերը շատ հաճախ ողողված են անպիտան ու վանող նյութերով, այնինչ պետք է դրանք լինեն գրավիչ և հետաքրքրություն առաջացնող, որպեսզի դրանցից օգտվողը գիտելիքներ ձեռք բերի՝ հաճելին օգտակարի հետ համատեղելով: Հրատարակված գրքերում ամեն ինչ ավելի քան ստանդարտ է և միապաղաղ, իսկ շարադրանքի խրթինությունը խթանում է միայն ընթերցանության հանդեպ անտարբերությունը:

Եթե ցանկանում ենք սերունդ կրթել, ապա անվերապահորեն պետք է ձեռնամուխ լինենք ստեղծագործ մտքի հզորացմանը:

Ինչ վերաբերում է բուհերում տիրող իրավիճակին, այստեղ ավելի գլոբալ խնդիրների ենք բախվում, ինչն էլ որոշ չափով ավագ դպրոցների «լճացումից» դուրս եկած ուսանողների անտեղյակության, մասնագիտական սխալ կողմնորոշվածության կամ չկողմնորոշվածության հետևանքն է: Դպրոցի յուրաքանչյուր շրջանավարտ պետք է այն համոզվածությամբ մտնի բուհ, որ իր ուսերի վրա չի ծանրանալու միայն պարտավորվածության բեռը, այլ միջավայրը թույլ է տալու իմացածն



ամրապնդել ու զարգացնել: Սակայն սա դեռ լոկ այսբերգի երևացող մասն է…

Հաճախ ականջալուր ենք լինում ուսանողների անվերջանալի դժգոհություններին ու բողոքներին՝ առարկաների ընտրությունից, դասավանդման մեթոդիկայից մինչև անպատասխանատու և ոչ պրոֆեսիոնալ մոտեցում: Հենց սրանք են դառնում անբավարարվածության պատճառը:

Ի՞նչ լուծում պետք է տրվի աշխատաշուկայում մրցունակ արտադրողականության բացակայությանը: Արդյո՞ք համալսարանները պատրաստում են անհրաժեշտ մասնագետներ համապատասխան ոլորտներում աշխատելու համար… Ինչո՞ւ մեզ կրթողներն անընդհատ հիշեցնում են, որ ինքնակրթությունն է մեր հաջողության գրավականը, փոխանակ ասելու՝ նաև ինքնակրթությունն է մեր հաջողության գրավականը… Ինչպե՞ս կարելի է բարձրացնել ուսանողների մոտիվացիան, ի՞նչ անհրաժեշտ միջոցառումներ պետք է ձեռնարկել ողջամիտ ժամկետում ուսանողներին ցանկալի հմտություններ փոխանցելու համար: Հարցերը շատ են, լուծումներ են պահանջում:

Կարծում եմ կրթական համակարգի թերություններից են նաև պահանջկոտության ու խստության պակասը, մասնագիտական գրականության սղությունն ու բացակայությունը, ինչն էլ հանգեցնում է հիասթափության, բայց ոչ երբեք նպատակասլացության մղելու:

Կարևորագույն և առանցքային կետերից մեկն էլ յուրաքանչյուր ոլորտում պրակտիկ դասընթացներ կազմակերպումն է, պետք է գիտակցել, որ միայն տեսական գիտելիքներով մեզ դիմավորելու են փակ դռներ:

Էլ չեմ խոսում բուհերում գործող զեղչերի ճկուն համակարգերի մասին, երբ վարձավճարների չափը երբեմն գերազանցում է նորման՝ անհասանելի դառնալով ուսանողի համար: Արդյունքում՝ ուսանողների մեջ հաճախ ստեղծվում է անառողջ մրցակցություն անվճար տեղերի համար, ինչի պատճառով էլ շատերի՝ իսկական կրթություն ստանալու ցանկությունը ստորադասվում է վճար չմուծելու ցանկությանը: Շատ դեպքերում էլ, կամա թե ակամա, ականատես ենք լինում գնահատականների, մեղմ ասած, «առք ու վաճառքին»:

Մինչև վստահ չլինենք, որ վերոնշյալ երևույթները հիմնովին արմատախիլ են արվել, ուրեմն բարձրագույն կրթություն ստանալու և առավել ևս զարգանալու մասին դեռ վաղ է խոսել:

Սրանք հարցեր են, որոնց լուծումով է նաև պայմանավորված կրթության ոլորտի զարգացումը:

Գոռ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ, լրագրություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

***

Հեքիաթներից պոկված դու իմ անխախտ մուսա,
Եռացող ներշնչման իմ անխափան շարժիչ,
Քո էներգատու և մեղմ ձայնը հուսամ՝
Չի դադարի երբեք կախվել իմ ունկերից:
Դու սեգ մտքի սլացք ու վեհ ճախրանք կտաս
Քո կեցվածքով, շարժով և հայացքով այն բիլ,
Որ այս համատարած աղտ ու կեղտից զտած՝
Ինձ տենչանքի շունչ է բերում մի անբասիր...

Գոռ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ, 2-րդ կուրս

ՄԱՅՐՍ

Մեծագույն սերն ապրում է մորս սրտում.
Բարություն ասելիս մորս եմ հիշում,
Նրա աչքերի լույսն եմ սիրում,
Սիրում եմ մորս քաղցր ժպիտը,
Իմ սխալները ներող հայացքը,
Նրա ջերմացնող ձեռքերն եմ սիրում:
Քիչ են բառերը, որ սերս պատմեմ,
Քիչ են աստղերը, թե ներքև բերեմ,
Ծովի ալեկոծ ծփանքը շոյող,
Քո գրկի նման՝ փափուկ ու գերող…
Ուզում եմ, որ միշտ կողքիս լինես, մա՜մ,
Երջանկությանը գերված մնամ հար,
Ուզում եմ ես քեզ միշտ ամուր գրկել,
Որ թվա հրաշք դրախտն եմ ընկել,
Գրկել, որ հոգիս նոր թևեր առնի,
Երջանկությամբ լի վերև սավառնի,
Որ միշտ աչքերս լցվեն քեզանով,
Սիրում եմ քեզ, մա՜մ, քնքշանքի իմ ծով:

Սոֆյա ՀԱՄԲԱՐՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 2-րդ կուրս

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Շախմատի կրթական հետազոտությունների կենտրոնի» և նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի փոխհամաձայնությամբ, պարբերաբար կազմակերպվող հեռավար քննարկումների արդյունքում սկսվել են վերապատրաստումներ «Շախմատը նախադպրոցական կրթական հաստատություններում» թեմայի շրջանակում:

Վերապատրաստումներին փոքրաթիվ խմբերով մասնակցում են ամբիոնի բոլոր դասախոսները:

Վերապատրաստումներն ընթանում են Սամվել Միսակյանի անմիջական ղեկավարությամբ:

ԱՐՑԱԽԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Գիրքը մարդկության պատմության, բոլոր գիտելիքների ու գիտությունների նյութականացված հիշողություն է՝ գրված քաղաքակրթության արյունով՝ թանաքով»:

Գ. Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Լույս է տեսել Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Գագիկ Սուքիասյանի «Գիրքը և գրադարանային-տեղեկատվական մշակույթը Արցախում» ուսումնական ձեռնարկը (2020 թ.): Այն նախատեսված է գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսների, ուսանողների և ընթերցողների լայն շրջանների համար: Հեղինակն անդրադարձել է Արցախի գրքի և գրադարանային-տեղեկատվական մշակույթի պատմությանը, գրատպության պատմական զարգացման վերլուծությանը, նոր կենտրոնների ձևավորման առանձնահատկություններին, կարևորել Արցախի բուհական գրադարաններին և այնտեղ Մատենադարանի զարգացման գործընթացը:

Լուսաբանվել է ուսումնական ձեռնարկի նպատակը, խնդիրներն ու նշանակությունը, ներկայացնելով գրքի և պարբերական մամուլի պատմությունն ու գրադարանային գործի փոխադարձ կապերի զարգացման առանձնահատկությունները: Վերլուծվել է Արցախի մասին տեղեկատվագիտական աղբյուրները՝ ընթերցողին հաղորդակից դարձնելով գրադարանային-տեղեկատվական մշակույթի անցյալին, ներկային և զարգացման հեռանկարներին:

Ուսումնական ձեռնարկն ունի գիտակրթական կարևոր նշանակություն, որում համակողմանիորեն ներկայացված, վերլուծված ու գնահատված են ինչպես Արցախի, այնպես էլ Հայաստանի և հայկական Սփյուռքի

ԳԱԳԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԳԻՐՔԸ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԱՐՑԱԽՈՒՄ

գրադարանային-տեղեկատվական կենտրոնների արժեհամակարգերը, նրանց տեղեկատվական, և մշակութաբանական նշանակությունը:

Ուսումնական ձեռնարկը հարուստ է նաև ընթերցողներին ուղղված գործնական առաջադրանքներով և հանձնարարական գրականության մատենագիտություններով, որոնք ավելի են բարձրացրել աշխատանքի տեղեկատվական և աղբյուրագիտական արժեքը:

ԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ գիտական գրադարանի ընթերցասրահների բաժնի պետ

ԳՐՔԻ ՊԱՐԳԵՎԱԾ ԼՈՒՅՍՆ ՈՒՐԻՇ Է



ՀՊՄՀ Հենակետային վարժարանի 12-րդ դասարանի աշակերտ Արարատ Խաչատրյանը գիրք նվիրելու օրն անցկացրեց յուրատեսակ նախաձեռնությամբ. նա իր ուսուցիչներին և դասընկերներին նվիրեց իր իսկ հեղինակած գիրքը:

Արարատ Խաչատրյանն արդեն հասցրել է 2 գիրք հեղինակել. առաջինը հայ գրականության վերաբերյալ ուղեցույց էր, երկրորդը՝ մեթոդական ձեռնարկ:

«Մեր գրականության ականավոր դեմքերը» մեթոդական ձեռնարկն օգնում է մեծահասակներին և փոքրերին՝ ծանոթանալու մեր գրողների կյանքին և ստեղծագործություններին:

Գրքում տեղ են գտել այնպիսի գրողներ, որոնց ստեղծագործություններն ամբողջովին հագեցած են խորը լիրիկայով և ռոմանտիկ դրվագներով: Բայց կան նաև իրենց գրական ֆաբուլան և սյուժեն ազգային տենդենցին և գավառական բարքերին ու աշխատավորությանը նվիրված գրողներ, օրինակ՝ Ռաֆֆին, Մուրացանը և Շիրվանզադեն, իսկ լիրիկական և ռոմանտիկ ստեղծագործության հեղինակներն են Ա. Բակունցը և Պ. Սևակը:

Գրողների կենսագրական տվյալները հեղինակը հավաքագրել է այնպիսի աղբյուրներից, որոնցից վերցված տվյալները գրեթե չեն գործածվում գրականության դասագրքերում: Սակայն ավելի շատ խոր ուսումնասիրության է ենթարկել Սևակի ստեղծագործությունները, որովհետև նա Արարատ Խաչատրյանի ամենասիրելի գրողն է. «Ես Սևակին որակում եմ որպես «հայ ամենափառավոր բանաստեղծ» և «հայ մեծագույն պոեզիայի արքա»: Մնացյալը կընթերցեք գրքում»,-նշում է հեղինակը:

«Մանկուց գրել եմ, բայց այդ տարիքի ստեղծագործություններն այդպես էլ մնացին թղթերի վրա միայն. հասկացա, որ պոեզիան ինձ համար չէ: Թեև որոշել եմ պատմության աղբյուրները պրպտել և դառնալ պատմաբան, բայց գեղարվեստական վերլուծությունն ինձ անչափ հոգեհարազատ է. կշարունակեմ անպայման», ընդգծում է հեղինակն ու հավելում՝ գրքի պարգևած լույսն ուրիշ է:

Արարատ Խաչատրյանը, անդրադառնալով իր սերնդակիցների՝ ընթերցելու հանդեպ ունեցած վերաբերմունքին, վստահեցնում է՝ գիրք կարդալն այսօր էլ նորաձև է. «Գիրքն ուսուցիչ է՝ իրի տեսքով»,-հավելում է Արարատ Խաչատրյանը:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 5.03.2021 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ